

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ԱՐՏԱՇԵՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ
ՀԻՄՆԱԽԱԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԱԿԱՆ ՍԱՐԱՆԻ**

ԺԲ.00.04 - Դատական իրավունք (դատարանակազմում լոբբինգ, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալ իստիկա, դատական վերաքննություն, վատարանություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն և սեսուություն) մասնագիտություն ամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ОГАНЕСЯН АЙК АРТАШЕСОВИЧ

**ПРОБЛЕМЫ ПРОИЗВОДСТВА ПО ДЕЛАМ ОБ
ОСПАРИВАНИИ АРБИТРАЖНЫХ РЕШЕНИЙ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

АВТОРЕФЕРАТ

**диссертации на соискание ученой степени кандидата юридических наук
по**

специальности 12.00.04 - Судебное право (судоустройство, гражданский процесс, уголовный процесс, криминалистика, судебная экспертиза, адвокатура, теория оперативно-розыскной деятельности)

ЕРЕВАН-2016

**Ատենախոսություն թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝

**իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ Վ.Վ.**

Յո՞վհաննիսյան

Պաշտոնակատար
ընդդիմախոսներ՝

իրավաբանական գիտություններին
դոկտոր, պրոֆեսոր **Ա. Յ. Դավթյան**
իրավաբանական գիտություններին
թեկնածու, դոցենտ **Ս. Գ. Մեղրյան**

Առաջատար
կազմակերպություն՝

**Հայ-ռուսական (սլավոնական)
համալսարան**

Ատենախոսություն պաշտպանությունը կայանալու է 2016 թվականի հունիսի 24-ին՝ ժամը 15⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՅ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2016 թվականի մայիսի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղարի պաշտոնակատար,
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ա.Գ.

Վաղարշյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук,
доцент **В. В. Оганесян**

Официальные
оппоненты: доктор юридических наук,
профессор **А. Г. Давтян**

Ведущая организация: кандидат юридических наук,
доцент **С. Г. Мегрян**
**Российско-Армянский (Славянский)
университет**

Защита состоится 24 июня 2016г. в 15⁰⁰ часов на заседании Специального совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 24-го мая 2016 года.

Исполняющий обязанности ученого секретаря
специализированного совета,
доктор юридических наук, профессор

А. Г. Вагаршян

Յետազոտվող թեմայի արդիականությունը. Տնտեսական հարաբերություններին և դրանց գլխավորումը համահունչ, աշխարհում վերելք ապրեցին վեճերի յոգավորման այլընտրանքային ինստիտուտները՝ մասնավորապես, առևտրային վեճեր լուծող ինստիտուտները, ինչպես նաև ad hoc արբիտրաժային դատարանները: Նշված արբիտրաժային դատարանները հանդիսանում են

գարգացած քաղաքացիական հասարակության ինստիտուտ և կատարում են սոցիալապես նշանակալից դեր՝ բեռնաթափելով դատական համակարգը և նպաստելով վեճերի լուծման ավելի կատարյալ, արագ և մասնագիտական բարձր մակարդակ ապահովող գործունե կառուցակարգերի զարգացմանը: Օտարերկրյան երդրու մեների խրախուսման կարևորագույն նախապայմաններից է անկախ և անաչառ մարմնի կողմից վեճը լուծելու օրենքով և միջազգային պայմանագրերով ամրագրված իրավունքների իրականացման կառուցակարգերի գոյությունը: Աշխարհի առաջատար երկրները, արագ ըմբռնելով արբիտրաժային կենտրոնի համարում ունենալու բոլոր դրական կողմերը, նպաստեցին իրենց երկրներում արբիտրաժային մշակույթի զարգացմանը: Այս հարցում անկյուննաքարային դերերից մեկը պատկանում է ազգային օրենսդրության ընդունմանը, որը կկարգավորի ներպետական արբիտրաժների գործունեությունը՝ օրենսդրորեն սահմանելով արբիտրաժային գործընթացներին դատական աջակցություն, միջամտություն և վերահսկողություն սահմանները: Արբիտրաժի միջոցով վեճը լուծելու եղանակն ընտրած քաղաքացիական շրջանառության մասնակիցները պետք է վստահ լինեն, որ ՀՀ-ում առկա է արբիտրաժային դատարանների վճիռներով իրենց համար սահմանած իրավունքների ու օրինական շահերի առանց ավելորդ խոչընդոտների իրականացման գործունե օրենսդրական կառուցակարգ: Այսպիսով առաջանում է արբիտրաժային դատարանների ակտերի վիճարկման վարույթի հստակ և մանրամասն նորմատիվ կարգավորման անհրաժեշտությունը:

Կարելի է արձանագրել, որ արբիտրաժային ակտերի վիճարկման ինստիտուտը ՀՀ քաղաքացիական դատավարության իրավունքի գիտության կողմից ոչ բավարար չափով ուսումնասիրված ինստիտուտներից մեկն է: Օրինակի համար նշենք, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքն այս ինստիտուտի կարգավորմանն ընդհանրապես չի անդրադարձնում, բացառությամբ մեկ հոդվածի:

Արդյունքում, Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկան՝ պայմանավորված այս ոլորտում պատշաճ օրենսդրական կարգավորման ոչ բավարար մակարդակով, ինչպես նաև հայրենի իրավաբանական գրականության մեջ այս ինստիտուտին նվիրված տեսական հետազոտությունների խիստ սակավությունը, աչքի է ընկնում բազմաթիվ հակասություններով և իրարամերժ դատական ակտերով: Բազմաթիվ են դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետության դատարանները վիճարկման վարույթը կարգավորող նորմերը կիրառել և մեկնաբանել են սխալ, մեկտեղել են չեղյալ ճանաչման և ճանաչման ու կատարման վարույթները: Ավելին, դատական պրակտիկայում վիճարկման վարույթն իրականացվում է ոչ այն է ընդհանուր, ոչ այն է հատուկ հայցային վարույթով: Տեղի է ունենում չկարգավորված ոլորտի վարույթ, տարբեր վարույթներին բնորոշ կանոնների կամայական համակցմամբ և կիրառմամբ:

Իրավիճակն ավելի է բարդանում վիճարկման վարույթում միջազգային տարրի առկայությունամբ: Նման իրավիճակը չի կարող գոհացուցիչ լինել մի պետության համար, որի առաջնային նպատակներից է տնտեսական և իրավական համակարգերի զարգացու-

մը, օտարերկրյան երդրու մների խրախուսումը, արտահանման ծավալների մեծացումը: Այս խնդրի լուծումն առանց արբիտրաժային ակտերի վիճարկման ինստիտուտի հանգամանակից և հստակ օրենսդրական կարգավորման հնարավոր չէ, ինչն էլ իր հերթին անհնար է առանց տեսական հետազոտությունների, այս ինստիտուտի հետ կապված խնդիրների վերհանման, այս բնագավառում այլ պետությունների փորձի ու սումնասիրություն:

Վերոնշյալ հանգամանքներով էլ պայմանավորված է «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության արդիականությունը, որի ուսումնասիրությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն:

Հետազոտության թեմայի մշակվածությունն աստիճանը: Անդրադառնալով թեմայի մշակվածության աստիճանին, հարկ ենք համարում նշել, որ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրների վերաբերյալ տեսական խորը ուսումնասիրություններն ու վերլուծությունները հայկական, իսկ մինչև վերջին ժամանակներս նաև ռուսական իրավաբանական գրականություն մեջ բացակայում էին, և դա, առաջին հերթին, պայմանավորված էր օբյեկտիվ նախադրյալներով: Ծուրջ յոթանասուն տարի խորհրդային Միությունում արտաքին տնտեսական հարաբերություններից և ընդհանրապես առևտրային վեճերից ծագող վեճերի լուծումը համարվում էր մենաշնորհ: Ավելի ն, հասարակական – տնտեսական ֆորմացիան դեմ էր ձեռնարկատիրական գործունեությանը, չէր խրախուսում մասնավոր սեփականությունը, ինչն էլ պայմանավորում էր արբիտրաժային վճիռների ճանաչման, կատարման և վիճարկման ինստիտուտին բավարարուչ արդյունքներ չհատկացնելը: Սակայն անկախացումից հետո հետխորհրդային պետություններում իրավաբանական գրականության մեջ այս հարցի նկատմամբ ուշադրությունն էականորեն աճեց: Բավական է նշել, որ միայն վերջին տարիների՝ մեծապես պայմանավորված թե՛ արբիտրաժային, և թե՛ դատական հարուստ արակտիկայի առկայությունը, ռուսական իրավաբանական գրականությունը հարստացել է բազմաթիվ գիտական աշխատություններով, որոնք ամբողջությամբ կամ առանձին գլուխներով անդրադառնում են արբիտրաժային ակտերի վիճարկմանը և վիճարկման վարույթի ինստիտուտին: Դրանցից կարելի է առանձնացնել Ա. Լ. Մակովսկու, Ե. Ա. Սուխանովի, Բ. Բ. Կարաբելնիկովի, Լ. Ֆ. Լեսնիցկայայի, Վ. Ա. Մուսիևի, Օ. Յու. Սկվորցովի, Ա. Ի. Մինակովի, աշխատությունները: Ցավոք, նույնը չի կարելի ասել Հայաստանի մասին: Հայ իրավաբանական գրականության մեջ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրներին նվիրված խորը գիտահետազոտական աշխատությունները բացակայում են մինչ օրս:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Հետազոտության նպատակն է արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրությունը և վերլուծությունը, այս ինստիտուտի հետ կապված խնդրահարույց հարցերի վերհանումը, ՀՀ-ում այս ինստիտուտը կարգա-

վորող օրենսդրության բազմակողմանի հետազոտությունը, օրենսդրության բացերի վերհանումը, դրանց վերացման, ինչպես նաև ընդհանուր օրենսդրության բարեփոխման վերաբերյալ առաջարկների ներկայացումը:

Վերոնշյալ նպատակներին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հասկացությունը, դրա հիմնական հատկանիշները և տեղը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համակարգում որոշելով՝ ուրվագծել Յայաստանում այս ինստիտուտի առկա հիմնախնդիրները, դրանք հաղթահարելու հիմնական ուղղությունները և հեռանկարները,

ներկայացնել արբիտրաժային վճիռների վիճարկման իրավական բնույթն ու էությունը՝ ուսումնասիրելով և վերլուծելով այս ոլորտի հայտնի տեսաբան-գիտնականների տեսակետները, ուսումնասիրել արբիտրաժային վճիռների վիճարկման հնարավորությունն նախատեսող ՀՀ միջազգային պայմանագրերը՝ վերհանելով դրանց թերությունները, առաջարկել լուծումներ այդ թերությունների վերացման համար, դասակարգել արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը, ուսումնասիրել Յայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև արբիտրաժային զարգացած օրենսդրություն, մշակույթ և արակտիկա ունեցող միջարք պետություններում ներկայումս գործող արբիտրաժային վճիռների վիճարկման ընթացակարգերը, փորձը և առաջարկներ ներկայացնել Յայաստանի Հանրապետությունում այն կատարելագործելու ուղղությամբ, որոշել Յայաստանի Հանրապետությունում արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի համար անհրաժեշտ նախապայմանները՝ փորձել պարզել, թե ներկայումս Յայաստանի Հանրապետությունում նման ակտերի վիճարկման համար ինչպիսի պայմանների առկայությունն է անհրաժեշտ նախատեսել Յայաստանի Հանրապետության ներպետական ճյուղային օրենսդրությամբ:

Հետազոտության օբյեկտը. Ատենախոսության հետազոտության օբյեկտը արբիտրաժային գործերով արբիտրաժային դատարանների կայացրած արբիտրաժային ակտերի վիճարկման վարույթում ծագող իրավահարաբերությունների ամբողջությունն է: Միևնույն ժամանակ ատենախոսության ուսումնասիրության շրջանակներից դուրս են մնում դատական մարմինների ակտերի վիճարկումից բխող իրավահարաբերությունները, քանի որ այս իրավահարաբերությունները՝ պայմանավորված իրենց առանձնահատկությամբ ու ներքին ծավալով, հանդիսանում են առանձին ատենախոսական հետազոտության թեմա:

Հետազոտության առարկան. հետազոտության առարկան է Յայաստանի Հանրապետությունում արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը և մասնավոր /հատուկ/ մեթոդներն ու եղանակները. Ատենախոսությունում, պայմանավորված հետազոտման կոնկրետ նպատակով ու խնդիրներով, օգտագործվել են ինչպես ընդհանուր հետազոտա-

կան մեթոդները /անալիզ, սինթեզ, անալոգիա և այլն/, այնպես էլ գիտահետազոտական այնպիսի հատուկ մեթոդներ, ինչպիսիք են իրավահամեմատական մեթոդը, որի կիրառմամբ վերլուծվել են Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա տարբեր պետությունների /Ռուսաստանի Դաշնության, Շվեդիայի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի/ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի բնագավառում առկա իրավակարգավորումները, վերենհանվել այս բնագավառում առկա հիմնախնդիրները, դրանց լուծման ուղղությունը և այլն: Հատուկ մեթոդներից կիրառվել է նաև պատմաիրավական մեթոդը:

Հետազոտության տեսական և նորմատիվաիրավական հենքը. Հետազոտության ընթացքում օգտագործվել են հայ և ռուս այնպիսի տեսաբան-գիտնականների աշխատանքներ, ինչպիսիք են Ս. Գ. Մեդրյանը, Վ. Վ. Հովհաննիսյանը, Ռ. Գ. Պետրոսյանը, Պ.Դ. Թադևոսյանը, Ա. Ս. Կոմարովը, Օ. Յու. Սկվորցովը, Վ. Վ. Յարկովը, Ն. Գ. Ելիսենը, Ա. Վ. Ասոսկովը, Վ. Ժուլյկովը, Յու. Գ. Մոռոզովան, Ս. Ն. Լեբեդեվը, Բ. Սեզլինը, Մ. Ա. Պոպովը, Վ. Ֆ. Յակովլեվան, Մ. Կ. Յուկովան և այլ հեղինակներ: Բացի այդ հետազոտության ընթացքում օգտագործվել են նաև արտասահմանյան այնպիսի գիտնականների աշխատանքներ, ինչպիսիք են Ալբերտ Յան վան դեն Բերգը, Գ. Բ. Բորնը, Մ. Հոուարդը, Փիթեր Սանդերսը, Ստավրոս Բրեկուլակիսը, Մ. Հանթերը, Ֆուլչարը, Գոլդմանը և այլ հեղինակներ:

Հետազոտության նորմատիվային հենքը կազմում են ինչպես արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթին վերաբերող ՀՀ օրենսդրության դրույթները, ՀՀ միջազգային պայմանագրերը, այնպես էլ այլ պետությունների՝ այս ոլորտին վերաբերող օրենսդրությունը /քաղաքացիական դատավարության օրենսգրքեր, միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ օրենքներ/, եվրոպական երկրներում այս ոլորտը կարգավորող կոնվենցիաները և ԵՄ կանոնակարգերը:

Հետազոտության էմպիրիկ հենքը հանդիսանում է այս ոլորտի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դատարանների դատական պրակտիկան:

Առնչվող ստույգի և պաշտպանության ներկայացվող դրույթները: Խոսելով առնչվող ստույգի և պաշտպանության նորույթի մասին՝ նախևառաջ պետք է նշել, որ հայ իրավաբանական գրականության մեջ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթին նվիրված գիտահետազոտական աշխատանքներ գրեթե չկան, իսկ առկա աշխատանքներն էլ կրում են առավելապես նկարագրական-պատմողական բնույթ և չեն անդրադարձնում այս ինստիտուտի կիրառման արդյունքում առաջ եկող խորքային խնդիրներին և հիմնահարցերին: Սույն աշխատության գիտական նորույթը դրսևորվում է նրանում, որ հայ իրավագիտության մեջ առաջին անգամ հնարավորինս խորը և համակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն է ենթարկվել արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը, որի արդյունքում հետազոտվել և վերլուծվել են այս ինստիտուտի հետ կապված այնպիսի կարևոր

րագույն հարցեր, ինչպիսիք են՝ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի իրավական նախադրյալները, արբիտրաժային ակտերի դասակարգումը, դրանց իրավական գործողության սահմանների հիմնախնդիրները, վեր են հանվել արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության բացերը և թերույունները, ներկայացվել են ինչպես Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այնպես էլ դատական արակտիկայի կատարելագործման առաջարկություններ:

Ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետությունում արբիտրաժային օրենսդրության ընդունման համար հիմք հանդիսացած Մոդելային օրենքը, դրամշակման վերաբերյալ աշխատանքային խմբի արխիվային փաստաթղթերը, Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի Կոնվենցիան և դրա առավել հեղինակավոր մեկնաբանությունները (փաստաթղթերն ուսումնասիրվել են դրանց անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն բնօրինակներով), Ժնևի Կոնվենցիան, ըստ որոնց հիմնավորվել է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և ընդհանրապես օրենսդրությունում արբիտրաժի բնագավառում օգտագործվող եզրույթների ճշգրտման և միասնականության ապահովման անհրաժեշտությունը:

Հետազոտության շրջանակներում հնարավորինս համակողմանի ուսումնասիրվել են արբիտրաժային դատարանների ակտերի վիճարկման՝ ինչպես Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի Կոնվենցիայով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այնպես էլ միջազգային արակտիկայում առավել հաճախ հանդիպող հիմքերը, բացահայտվել է դրանց բովանդակությունը, և առաջարկվել է դրանց դասակարգման սկզբունքը, հիմնավորվել է դատարանի կողմից դրանց կիրառման պարտականության դեպքերը և կարգը, որը պետք է նախատեսվի «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Կատարված հետազոտության գիտական նորույթը դրսևորվում է պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝

1. Հեղինակը, վերլուծելով առևտրատնտեսական հարաբերություններին ցեղեղի լուծման իրավական կարողակարգերի ինստիտուցիոնալ առանձնահատկությունները, արբիտրաժային ակտերի տեսակները և դրանց վիճարկման իրավական ռեժիմները, առաջարկել է տարանջատել միազգային հանրային և առևտրային արբիտրաժների ակտերի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու իրավական ռեժիմները, ներառյալ վիճարկման վարույթի շրջանակներում ճանաչման և կատարման դեմ առարկելը կամ արբիտրաժի ակտերի (վճռի) վիճարկումը: Այս դեպքում առաջարկվել է առանձին իրավակարգավորում, որը հստակեցնում է արբիտրաժային ակտերը ճանաչող և կատարողական թերթ տրամադրող իրավասու սուբյեկտների շրջանակը, դրանց գործառույթները, ինչպես նաև նշված իրավահարաբերությունների բովանդակությունը կազմող սուբյեկտիվ

պրոցեսուալ իրավունքներն ու պարտականությունները: Արդյունքում, հեղինակն առաջարկում է փոփոխություն և լրացում կատարել ՀՀ ՔԴՕ «Օտարերկրյա Անձանց Մասնակցությամբ Գործերի Վարույթը» վերտառություները կրող վեցերորդ բաժնում և 247⁶ հոդվածի իրավակարգավորման շրջանակներից առանձնացնել արբիտրաժային ակտերի ճանաչումը և հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրումը:

2. Կարևորելով արբիտրաժի կողմերի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության դատավարական միջոցների լիարժեք ապահովման հարցը, հեղինակն առաջարկում է ազգային իրավական մակարդակով հստակ իրավական կառուցակարգեր ամրագրել թե՛ արբիտրաժային վճիռների ճանաչում և հարկադիր կատարում պահանջելու, թե՛ արբիտրաժային վճիռների վիճարկման միջոցների իրացման առումով: Վերլուծելով վիճարկման վարույթը, հեղինակն առանձնացնում է այդ իրավունքի իրացման ձևերը: Հաշվի առնելով վիճարկման վարույթում հնարավոր միջազգային տարրն, ըստ որի, Հայաստանի Հանրապետությունում վիճարկման օբյեկտկարող են հանդիսանալ նաև օտարերկրյա արբիտրաժային ակտերը, հեղինակը հանգում է եզրակացության, համաձայն որի վիճարկման իրավունքի իրացումը պետք է ենթադրի ինչպես վճռի ճանաչման և հարկադիր կատարման դեմ առարկելը (օտարերկրյա արբիտրաժային ակտերի վիճարկման դեպքում), այնպես էլ այն չեղյալ ճանաչելու պահանջով իրավասու դատարանի մեջլու հնարավորություն: Այսպիսով, հեղինակն առաջ է քաշում և հիմնավորում է այն տեսակետը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչման և հարկադիր կատարման դեմ իրավունքների պաշտպանության հիմնական դատավարական միջոց պետք է դիտարկել առարկելու միջոցով վերոնշյալ ակտի իրավաչափությունը վիճարկելը:

3. Հեղինակի կողմից վերլուծվել է տեղական (Հայաստանի Հանրապետության տարածքը որպես արբիտրաժի վայր ընտրած արբիտրաժային դատարանի կողմից իրականացված արբիտրաժի արդյունքում կայացված) և օտարերկրյա արբիտրաժային վճիռների իրավական գործողության խնդիրները: Ըստ այդմ, տարանջատվել է այդ ակտերի գործողության սկիզբը՝ հաշվի առնելով իրավական որոշակիության սկզբունքը: Առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 109-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը օտարերկրյա արբիտրաժային վճիռների պարագայում կիրառելի համարել Հայաստանի Հանրապետության տարածքում դրանք ճանաչված լինելու պարագայում: Առաջ է քաշվել և հիմնավորվել է այն տեսակետը, համաձայն որի, Հայաստանի Հանրապետության տարածքում կայացված արբիտրաժային վճիռների օբյեկտային և սուբյեկտային շրջանակ ընդգրկված հարցերը քաղաքացիական դատավարության կարգով կրկին անգամ քննության և լուծման ենթակա չեն, բացառությամբ իրավասու դատարանի կողմից դրանց հարկադիր կատարման համար կա-

տարողական թերթի տրամադրումը մերժելու դեպքի: Ընդ որում, այս պարագայում, կողմը, իր սուբյեկտիվ նյութական և դատավարական իրավունքների պաշտպանության համար արբիտրաժային վճռի վիճարկման հնարավորությունը կարող է իրացնել անկախ այն հանգամանքից, թե արբիտրաժային վճռով պարտատերը կատարողական թերթ ստանալու պահանջով դիմե՞լ է դատարան, թե ոչ:

4. Ատենախոսության մեջ խորություն և հանգամանալից վերլուծվել են վիճարկման վարույթի օբյեկտային, սուբյեկտային և ձևական նախադրյալները: Ըստ այդմ, հեղինակի կողմից առաջ է քաջվել և հիմնավորվել է այն տեսակետը, որ վիճարկման օբյեկտ կարող են հանդիսանալ արբիտրաժային դատարանի բոլոր այն ակտերը, որոնք նյութական իրավունքներ և պարտականություններ են հաստատում արբիտրաժային գործին մասնակցող անձանց համար կամ որևէ ձևով ներգործում, սահմանափակում են վերջիններիս կողմից նյութական իրավունքների իրացման հնարավորությունը: Հետագոտելով արբիտրաժային վճռի իրավական ներգործության շրջանակը, հեղինակը հիմնավորել է, որ տեսություն մեջ այն կարող է և պետք է վերաբերի միմիայն արբիտրաժի կողմերին: Սակայն, ուսումնասիրելով տվյալ խնդրի առնչությամբ Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների արբիտրաժային և դատական պրակտիկան, հեղինակը չի բացառել, որ արբիտրաժային վճռով կարող են շոշափվել նաև այլոց (արբիտրաժի կողմ չհանդիսացող սուբյեկտների) իրավունքներն ու օրինական շահերը: Ըստ այդմ, հեղինակը վեր է հանել և առանձնացրել է վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալների հիմնական և գլխավոր հատկանիշը, այն է՝ արբիտրաժի կողմերի կամ կողմ չհանդիսացող սուբյեկտի նյութական իրավունքների և պարտականությունների վրա արբիտրաժային դատարանների ակտի ազդեցությունը կամ անմիջական ներգործությունը: Այսպիսով, հեղինակը հանգել է հետևություն, ըստ որի, արբիտրաժային վճիռների վիճարկման իրավունքով պետք է օժտված լինեն նաև այն անձինք, որոնց նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է վեճն ըստ էության լուծող արբիտրաժային ակտ կամ արբիտրաժային ակտը անմիջականորեն ներգործում է վերջիններիս նյութական իրավունքների և պարտականությունների վրա: Արբիտրաժային վճիռները չեղյալ ճանաչելու միջոցով վիճարկման վարույթի օբյեկտ կարող են հանդիսանալ մինչև իրավասու դատարանի կողմից դրանց հարկադիր կատարման համար կատարողական թերթի տրամադրման մասին որոշման կայացումը: Ուստի, արբիտրաժային վարույթի մասնակից չհանդիսացող անձինք իրենց սուբյեկտիվ իրավունքները կարող են պաշտպանել դատարանի կողմից կայացված՝ արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու միջոցով: Առաջարկվում է օրենսդրորեն ամրագրել արբիտրաժային վարույթի մասնակից չդարձած անձանց կողմից իրենց նյութական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացված արբիտ-

րաժայիՆ վճիռների հիման վրա դատարանի կողմից կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ որոշումների բողոքարկման հնարավորությունը՝ դրա համար սահմանելով բողոքարկման հստակ կարգ և ժամկետներ, միաժամանակ վերոնշյալ դեպքը համարել վերաքննիչ դատարանի կողմից նման որոշումը վերացնելու պարտադիր հիմք:

5. ԱրբիտրաժայիՆ վճռի չեղյալ ճանաչման հիմքերի բազմակողմանի վերլուծության արդյունքում, հեղինակի կողմից առաջարկվել է դրանց առկայություն պարագայում սահմանափակել և հստակ իրավաչափության պայմաններ սահմանել իրավասու դատարանի կողմից վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատական հայեցողության դրսևորման մասով: Այսպիսով, երբ դատարանը հանգի այն եզրակացության, որ առկա են արբիտրաժայիՆ վճիռը ոչ իրավաչափ և դրա իրավական գործողության հատկանիշներն առնչինչ դարձնող հանգամանքները, ապա այն չպետք է դրսևորի դատական հայեցողություն, այլ ունենա այդպիսի ակտը չեղյալ ճանաչելու օրենսդրորեն ամրագրված պարտականություն: Ինչ վերաբերում է դատական հայեցողության դրսևորմանը, ապա առաջարկվում է այն սահմանափակել միայն այդպիսի հանգամանքները գնահատելու և արբիտրաժայիՆ դատարանի ակտի իրավաչափության պայմանները որոշելու հարցով:

6. Ատենախոսության մեջ առաջարկվում է դասակարգել արբիտրաժայիՆ վճռի վիճարկման հիմքերն այնպես, որպիսի պայմաններում հստակ կերևա դատարանի կողմից ի պաշտոնե (ex officio) այդպիսի հիմքերի առկայությունը պարզելու պարտականությունն այն իրավական հանգամանքներից, որոնք ապացուցելու պարտականությունը կրում է արբիտրաժայիՆ վճիռը վիճարկող կողմը:

7. Հեղինակի կողմից առաջ է քաշվել և հիմնավորվել է այն տեսակետը, որ արբիտրաժայիՆ վճռի վիճարկման արդյունքում այն չեղյալ ճանաչելը կամ հարկադիր կատարումը մերժելը հանգեցնում է «պարտատիրոջ» նյութական իրավունքի անիրացվելիությանը, քանզի արբիտրաժայիՆ վճռի հարկադիր կատարում պահանջելը վճռով հաստատված նյութական իրավունքի իրավական պաշտպանության կառուցակարգ է: Առաջարկվում է դատական ակտերի եռաստիճան դասակարգման համատեքստում արբիտրաժայիՆ վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դատարանին վերապահել գործը լուծող վերջնական դատական ակտ կայացնելու իրավասություն:

8. Հեղինակն ընդգծել է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժայիՆ և դատական ձևերի տարբերությունը, ինչով էլ պայմանավորված, հիմնավորվել է, որ արբիտրաժայիՆ վճռի վիճարկման հիմքում ողջ ծավալով չեն կարող դրվել արդար դատաքննության իրավունքի բովանդակությունը կազմող տարրերի խախտումներն այնքանով, որքանով սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության արբիտրաժայիՆ ձևի նկատմամբ լիարժեքորեն կիրառելի չեն դատական պաշտպանության ձևի օրինաչափությունները և արդար դատաքննության տարրերն իրենց ամբողջությամբ կիրառելի չեն արբիտրաժայիՆ վարույթի

նկատմամբ: Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը դիտարկելով որպես սուբյեկտիվ իրավունքի դատական պաշտպանության ձև, հեղինակը հանգել է այն եզրակացության, որ արդար դատաքննության տարրերը վերաբերելի են արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթին, սակայն այն վերապահումներով, որոնք պայմանավորված են արբիտրաժային քննության և արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերի իրավական (այդ թվում կոնվենցիոն) առանձնահատկություններով:

Յետազոտության գիտագործնական նշանակությունը: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների տեսական նշանակությունը նախևառաջ պայմանավորված է նրանով, որ այն հանդիսանում է քաղաքացիական դատավարության ոլորտում արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված առաջին համալիր և ամբողջական հետազոտությունը հայկական դատավարագիտության մեջ: Ատենախոսության հիմնադրույթները և դրանում առկա եզրահանգումները կարող են օգտագործվել ինչպես քաղաքացիական դատավարության գիտության, այնպես էլ միջազգային մասնավոր իրավունքի գիտության ոլորտների զարգացման համար: Ատենախոսությունը պարունակում է նաև ՀՀ-ում արբիտրաժային վճիռների վիճարկման ինստիտուտը կարգավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Յետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև «քաղաքացիական դատավարությանն», ինչպես նաև «միջազգային մասնավոր իրավունք» առարկաների դասավանդման ընթացքում:

Ուսումնասիրության արդյունքների ներդրումն ու փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստված է երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնում: Ատենախոսությունում արտացոլված եզրահանգումները, հիմնադրույթները և առաջարկությունները համամասնորեն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված թվով 4 գիտական հոդվածներում: Ատենախոսության միջարք դրույթները հեղինակի կողմից ներկայացվել են զեկույցների և առանձին դասընթացների շրջանակներում:

Ատենախոսության եզրակացությունների և առաջարկների որոշ մասն իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ արդարադատության նախարարության աշխատանքային խմբի կողմից մշակված «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում, ինչպես նաև ներդրվել են «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում և «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքներում¹:

Ատենախոսության կառուցվածքը: Յետազոտությամբ առաջարկված խնդիրների համարժեք ու ծման նկատառումներով պայմանավորված՝ ընտրվել է աշխատության այնպիսի կառուցվածք, որը

¹ Տե՛ս ՀՀ արդարադատության նախարարի 28.07.2015թ. գրությունը (կցվում է):

հնարավորություն է տվել անհրաժեշտ խորություն և ամբողջականություն և ներկայացնել ու հետազոտության նյութը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից /որոնք ընդհանուր առմամբ ներառում են 6 պարագրաֆներ/, եզրակացությունից, հավելվածից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒ ԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ընտրված թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկա, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդական հիմքերը, գիտական նորությունը, ցույց են տրված հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ատենախոսության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը, ինչպես նաև ձևակերպված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության **առաջին գլուխը** «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հասկացությունը, հիմնական հատկանիշները և տեղը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համակարգում» վերտառության ամբ, կազմված է երեք պարագրաֆներից: Սույն գլխի նախաբանում վերլուծության են ենթարկվել վիճարկման վարույթը կարգավորող ներպետական օրենսդրությունը և միջազգային պայմանագրերը՝ նշված վարույթի սուբյեկտիվ սահմանների և ձևերի որոշման նպատակով: Դատավարական գրականության մեջ քաղաքացիական դատավարության տեսակի վերաբերյալ բնորոշումների և վիճարկման վարույթի ու քաղաքացիական դատավարության կարգով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի քննության ընդհանուր, հատուկ և հատուկ հայցային վարույթների համեմատական վերլուծության հիման վրա հեղինակը գալիս է եզրահանգման, որ արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը հանդիսանում է քաղաքացիական դատավարության տարբերակված ձև:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը, դրանց դասակարգումը» վերտառության ամբ, արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը կարելի է դասակարգել երկու խմբի: Առաջին խումբը ներառում է այն դեպքերը, երբ արբիտրաժային դատարանի վճիռը վիճարկվում է արբիտրաժային համաձայնության արատների և արբիտրաժային վարույթի ընթացակարգային խախտումների հիմքերով. ընդ որում, նշված խախտումների առկայության ապացուցման բեռն օրենքով դրված է այն կողմի վրա, ով իրավասու դատարանի առջև վիճարկել է արբիտրաժային վճիռը: Դասակարգման երկրորդ խումբն իրենում ներառում է արբիտրաժային դատարանին վեճի (գործի) առարկայական ենթակայության ամբ ՀՀ հանրային կարգին հակասելու փաստով պայմանավորված պատճառները: Վերլուծելով նշված հիմքերը, հեղինակը եզրահանգել է, որ եթե նույնիսկ կողմը վիճարկում է արբիտրաժային վճիռը՝ դասակարգման

առաջին խմբի մեջ մտնող հիմքերով, իրավասու դատարանը պարտավոր է իր սեփական նախաձեռնությունով ex officio պարզել, արդյո՞ք տվյալ գործը ենթակա է եղել արբիտրաժային դատարանում քննության և չի՞ հակասում արդյոք այն հայկական իրավունքի հիմնարար սկզբունքերին:

Հաջորդիվ, ուսումնասիրելով և վերլուծելով Սոդեյային օրենքի, Կոնվենցիայի և «Առևտրային արբիտրաժի» մասին ՀՀ օրենքի համապատասխան հոդվածները և դրանց կիրառման միջազգային պրակտիկան, հեղինակն անդրադարձել է արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը պարզելու և դրանք կիրառելու դատարանի հայեցողական իրավունքի և պարտականության հարցին և գտել, որ տվյալ հարցում ՀՀ-ում ներկայումս պետք է որդեգրել դատարանների ոչ թե հայեցողական իրավունքի, այլ պարտականության սկզբունքը և համապատասխան արար փոփոխել «Առևտրային արբիտրաժի» մասին ՀՀ օրենքի 34 և 36-րդ հոդվածները, ինչպես նաև ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերը, որոնք ապացուցելու պարտականությունը կրում է դիմում ներկայացրած կողմը» վերտառությամբ, քննարկված են արբիտրաժային վճիռի վիճարկման այն հիմքերը, որոնց դատարանը կարող է անդրադարձնալ արբիտրաժային վճիռը վիճարկող կողմի հղման դեպքում և արբիտրաժային համաձայնության հնարավոր անվավերության մասին թերույնություններով կնքված համաձայնության մասնավորված արբիտրաժային տրիբունալի իրավասության և ընթացակարգային խախտումների հետ կապված հիմնախնդիրները: Պայմանականորեն դասակարգված և վերլուծված են արբիտրաժային համաձայնության արատներն ըստ անվավերության, գործողության (ուժի) պահպանման և կատարելիության չափանիշների: Ներկայացված և վերլուծված են նշված հիմքերի կիրառմամբ դատական և արբիտրաժային պրակտիկան: Ըստ այդմ, ուսումնասիրվել են արբիտրաժային համաձայնության ինքնավարության, «competence-competence» սկզբունքին, կողմի անգործունակության, արբիտրաժային դատարան և տրիբունալ հասկացությունների որոշ հիմնահարցեր և կատարվել են առաջարկներ՝ ՀՀ դատական և արբիտրաժային պրակտիկայում դրանց առավել ճիշտ և միջազգային արբիտրաժային պրակտիկայում ընդունված մոտեցումներին հնարավորինս համահունչ մեկնաբանման նպատակով:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Արբիտրաժային վճիռի վիճարկման՝ առարկայական ենթակայության մասին (արբիտրաժայինության) և հանրային կարգին հակասելու հիմքերը» վերտառությամբ, ուսումնասիրվում և վերլուծվում են ենթարկվում նշված հիմքերի առաջացման նախադրյալները, դատավարագիտության ոլորտում առկա մոտեցումները, օրենսդրական կարգավորումները և միջազգային փորձը:

Ելնելով «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի տրամաբանությունից, այն վեճերը, որոնք այլ օրենք-

ների ու ժողով ենթակաջ են արբիտրաժի լուծմանը, պետք է սահմանվեն այդ օրենքներով: Մինչդեռ, օրենսդիրը որդեգրել է այլ մոտեցում, համաձայն որի, տարբեր օրենքներում նշված են այն դատարանները, որոնց լուծմանը հանձնվում են որոշակի կատեգորիայի վեճեր: Հաշվի առնելով Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-ին մասի 2-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի ա) ենթակետերի կարգավորումները, ըստ որոնց դատարանը կարող է չեղյալ ճանաչել արբիտրաժային վճիռը, եթե պարզի, որ «համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ վեճի առարկան ենթակաջ է լուծման արբիտրաժի կողմից», հեղինակը եզրակացնում է, որ վեճի առարկայական ենթակայությանն անդրադարձնալու համար կամ վիճարկող կողմը կամ դատարանը պետք է համադրեն վեճի առարկան՝ ՀՀ օրենսդրությամբ արբիտրաժի քննությանը հանձնելու իրավունքի առկայության կամ բացակայության հետ: Այսպիսով, ՀՀ իրավասու դատարանը չպետք է կաշկանդվի օտարերկրյա արբիտրաժային դատարանի վճռի ճանաչումը և կատարումը Հայաստանում մերժելու հարցում, եթե վիճարկման վարույթի ընթացքում պարզի, որ տվյալ կատեգորիայի վեճը ՀՀ օրենսդրության համաձայն չի կարող ենթակալիսել արբիտրաժի լուծմանը:

Հատկանշական է, որ հանրային կարգի մասին հղումը ներառված է տարբեր երկրների օրենքներում, սակայն ինչպես և մեր դեպքում, այն մանրամասնած չէ: Ուսումնասիրելով հանրային կարգի կիրառման օտարերկրյա դատական պրակտիկան և դատավարագիտության ոլորտում առկա մոտեցումները, ինչպես նաև Միջազգային իրավունքի Ասոցիացիայի 2002թ. Հանձնարարականը, հեղինակը գալիս է համոզման, որ հանրային կարգը և դրան հակասելը որոշվում են յուրովի՝ կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով, թեև նկատելի է մոտեցումների նմանության միտում: Նմանությունը, մասնավորապես, ի հայտ է գալիս արբիտրների անկախության և անաչառության, կողմի հիմնարար իրավունքների խախտման կամ արբիտրաժային վճռի կատարման դեպքում դրա և տվյալ պետության օրենսդրության (ներառյալ միջազգային պայմանագրերի) հակասության վերաբերյալ դատարանների արտահայտած դիրքորոշումներում:

Առնչախոսության **երկրորդ գլուխը** «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի իրավական նախադրյալները» վերտառնությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալները» վերտառնությամբ, ուսումնասիրվում և վերլուծության են ենթարկվում արբիտրաժային դատարանի ակտը (վճիռն ու որոշումն իրենց տարատեսակներով), որպես վիճարկման իրավունքի իրականացման նախադրյալ, արբիտրաժային վճռի իրավական ուժի հատկանիշները, կառուցվածքը, դրա բովանդակությանը ներկայացվող նորմատիվ պահանջները: Տարբերակված են արբիտրաժային դատարանի վիճարկման օբյեկտ հանդիսացող ակտերը: Հայրենական օրենսդրության և միջազգային փորձի (ներառյալ ՄԱԿ-

ՄԱԻՅ/UNCITRAL արխիվային նյութերի) ուսումնասիրության արդյունքում, հեղինակը գտել է, որ որ հայրենի դատավարագիտությանը և իրավական համակարգին առավել համահունչ կլինի դատարանին օժտել արբիտրաժային վճիռը մասնակիորեն չեղյալ ճանաչելու իրավունքով:

Իրավաբանական գրականության մեջ խնդրահարույց է մնում արբիտրաժային դատարանի կայացրած միջանկյալ ակտի վիճարկման օբյեկտի հանդիսանալու հարցը: Այս առումով, կարևորվում է հատկապես հայ ցի ապահովման միջոցների կիրառման մասին արբիտրաժային դատարանի (այդ թվում՝ օտարերկրյա) կողմից ընդունվող ակտի ձևի խնդիրը: Օրենսդիրը «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրել է հայ ցի ապահովման միջոցների կիրառման մասին միջանկյալ վճռի ճանաչման, հարկադիր կատարման կամ չեղյալ ճանաչման հնարավորությունը: Այս դեպքում, օրենսդրական կարգավորումից դուրս են մնում հայ ցի ապահովման միջոցների կիրառման մասին որոշման ձև ու նեցող արբիտրաժային ակտի ճանաչման, կատարման և որպես հետևանք նաև վիճարկման հարաբերությունները: Այսպես, հայ ցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշմամբ նյութական իրավունքի վիճելի իրավահարաբերություններ չեն կարգավորվում և առնվազն ներառական արբիտրաժում դրանք պետք է ունենան որոշման ձև: Մյուս կողմից Կոնվենցիան հստակորեն չի տարանջատում գործն ըստ էության լուծող և չլուծող, ինչպես նաև միջանկյալ և վերջնական ակտերը: Ստեղծվում է անհավասար դաշտ ներառական և օտարերկրյա արբիտրաժային տրիբունալների կողմից հայ ցի ապահովման միջոցների կիրառման վերաբերյալ կայացված ակտերի ճանաչման և կատարման առումով, որպիսի պայմաններում, օտարերկրյա արբիտրաժային տրիբունալի ակտը կարող է ունենալ ցանկացած ձև, սակայն ՀՀ-ում ենթակա կլինի ճանաչման և կատարման առնվազն Կոնվենցիայի ուժով: Մինչդեռ, ինչպես բխում է արբիտրաժային օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի տառացի մեկնաբանությունից, ՀՀ տարածքում իրականացվող արբիտրաժի դեպքում, հայ ցի ապահովման միջոցներ կիրառելու մասին արբիտրաժային տրիբունալի որոշման ճանաչման և կատարման համար այդպիսի որոշումը պետք է անպայմանորեն ունենա միջանկյալ վճռի ձև: Կարծիք է արտահայտվում, որ վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալ կարող է հանդիսանալ արբիտրաժային տրիբունալի՝ գործն ըստ էության լուծող վերջնական ակտը՝ վճիռը, որը կհամապատասխանի արբիտրաժային վճռի իրավական ուժի հատկանիշներին և արբիտրաժային վճռին ներկայացվող պահանջներին: Ինչ վերաբերում է հայ ցի ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացվող ակտին, ապայն պետք է հանդիսանա որոշում, ունենա որոշման ձև, իսկ դրա ճանաչումը, կատարումն ու վիճարկումը պետք է ունենան հստակ օրենսդրական կարգավորում:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի սուբյեկտային նախադրյալներ

րը» վերտառու թյամբ, ներկայացված է այն անձանց շրջանակը, ում սուբյեկտիվ իրավունքներն ու օրինական շահերը կարող են խախտվել արբիտրաժային վճռով և որոնց համար արբիտրաժային վճռով կարող են ծագել, փոփոխվել կամ դադարել իրավունքներ և պարտականություններ: Արբիտրաժային օրենքի վերլուծության հիման վրա ընդգծելով արբիտրաժի կողմերի՝ վիճարկման վարույթի սուբյեկտի հանդիսանալու ակներևությունը, հեղինակն անդրադառնում է արբիտրաժի կողմ չհանդիսացող այլ անձանց՝ արբիտրաժային վճռի վիճարկման իրավունքին: Սույն խնդրի քննարկման նպատակներից ելնելով, հեղինակը սուբյեկտներին բաժանել է մասնավոր և հանրային կատեգորիաների՝ ըստ նյութական իրավահարաբերության մասնակից լինելու կամ չլինելու սկզբունքի: Առաջին դեպքում վիճարկման իրավունքից օգտվում են քաղաքացիական շրջանառության այն սուբյեկտները, որոնք դիմում են դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Յանրային կատեգորիայի սուբյեկտների կազմում հանդես են գալիս պետական մարմինները՝ դատավարական հայցվորները:

Վերլուծելով արբիտրաժային օրենսդրությունը, ՀՀ-ում գործող հիմնական արբիտրաժային հաստատությունների կանոնակարգերը և համադրելով դրանցում առկա իրավակարգավորումներն աշխարհի առաջատար արբիտրաժային հաստատությունների կանոնակարգերի և միջազգային փորձի հետ, ինչպես նաև ուսումնասիրելով իրավաբանական գրականությունում առկա մոտեցումները արբիտրաժային վճռի գործողության սուբյեկտիվ սահմանների վերաբերյալ, հեղինակը գալիս է այն համոզման, որ արբիտրաժային վճիռը տարածվում է միայն արբիտրաժի կողմերի վրա և այդ սահմաններից դուրս չպետք է անդրադառնա արբիտրաժի մասնակից չդարձ (վ)ած անձանց իրավունքների և պարտականությունների վրա: Մյուս կողմից, հեղինակը չի բացառում արբիտրաժային վճռով այլ անձանց իրավունքներ և պարտականություններ շոշափելու իրողությունը և մատնանշում այդ դեպքում անձի խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության/վերականգնման օրենսդրական հստակ կարգավորման անհրաժեշտությունը՝ դատավարական իրավունքների չչարաչափման և բարեխղճության սկզբունքների պահպանման համատեքստում:

Քննարկելով հանրային կատեգորիայի սուբյեկտներին, հեղինակն առաջարկում է դատախազի կողմից արբիտրաժային վճիռների վիճարկման դիմում ներկայացնելիս, որպես նյութաիրավական հայցվոր նշել և գործին ներգրավել վիճելի նյութական իրավահարաբերության կողմ հանդիսացող սուբյեկտին: Հեղինակը կարծիք է հատնում որ այս համատեքստում արբիտրաժային համաձայնությունը տարածվում է նաև դատախազի վրա և վերջինս նույնպես կաշկանդված է վիճարկման ժամկետներով: Այս մոտեցումն, ըստ հեղինակի, բխում է արբիտրաժի՝ վեճերի արագ և վերջնական լուծման նպատակներից, ինչպես նաև դատավարության կայունություն և արդարադատության տնտեսման ու կանխա-

տեսել ի ության սկզբունքներից: Վերլուծելով «անուղղակի հայցերով» արբիտրաժային վճռի կատարման խոչընդոտը մի կողմից, դատական միջամտության սահմանները և չբացառելով արբիտրաժային վճռի վիճարկման ժամկետի բացթողման կամ արբիտրաժում հաշտության համաձայնության կնքման գործողություններում պրակտիկայում կարող են առկա լինել հանցագործության հատկանիշներ, հեղինակը եզրահանգում է, որ յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներից և կայացված արբիտրաժային վճռի տեսակից ելնելով միայն կարելի է ընտրել խախտված սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության ձևը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆում՝ «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի ձևական նախադրյալները» վերտառությունամբ, բացահայտվում են այն կանոնները, որոնք ձևավորում են արբիտրաժային վճռի վիճարկման համար օրենքով նախատեսված կարգ և սահմանում են վիճարկման դիմումի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները: Հետագոտելով ձևական նախադրյալները դրանց օրենսդրորեն հստակ սահմանված լինելու առումով՝ հեղինակը գալիս է եզրակացության, որ կարգավորումն ամբողջական չէ և դատական պրակտիկայում իրավասու դատարանը վիճարկման վարույթում ստիպված է ի հեճուկս կանոնակարգված ընթացակարգի՝ գործել քաղաքացիական դատավարության ընդհանուր կանոններով: Սա իր հերթին անհստակության մթնոլորտ է ստեղծում դատարանի և կողմերի համար: Փաստվում է, որ ՔԴՕ հատուկ հայցային և հատուկ վարույթների գործերով սահմանված են դատարան ներկայացվող դիմումների կանոնների հետ, հեղինակը բացահայտում է վիճարկման դիմումի համար անհրաժեշտ ձևական նախադրյալների կազմը: Հաշվի առնելով կապի միջոցների զարգացման սրընթաց տեմպերը, էլեկտրոնային կառավարության և կառավարման համակարգերի և ծրագրերի լայն ներդրումը ՀՀ-ում, առաջարկվում է դատարանի պաշտոնական կայքում տեղադրել նշված դիմումի օրինակելի ձև և ՀՀ ՔԴՕ-ով սահմանել, որ դիմումը կարելի է հանձնել դատարան՝ նաև օրինակելի ձևը առցանց լրացնելով և ուղարկելով: Նույնը վերաբերում է նաև այդ դիմումին կից փաստաթղթերը առցանց դատարան առաքելուն: Պարագրաֆի վերջում հեղինակի կողմից նորմավորված ձևով սահմանվում են դիմումի ձևին և բովանդակությանը վերաբերող պահանջները և կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Եզրակացությունում ընդգրկված են հետագոտության հիմնական արդյունքները և հեղինակի եզրահանգումները, ինչպես նաև օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունները, որոնք ամփոփահանգում են հետևյալին.

- Միջազգային հանրային և առևտրային արբիտրաժների ակ-

տերի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու, այդ թվում՝ այս վարույթի շրջանակներում ճանաչման և կատարման դեմ առարկելու կամ արբիտրաժի ակտերը (վճիռը) վիճարկելու իրավական ռեժիմների տարանջատման նպատակով՝ անհրաժեշտ է հստակեցնել այդ ակտերը ճանաչող և կատարողական թերթ տրամադրող իրավասու սուբյեկտների շրջանակներում գործառնությանը:

- Առաջարկվում է Արբիտրաժային օրենքի 16-րդ հոդվածի փոփոխությամբ «անվավեր» եզրույթը փոխարինել «առնչինչ» եզրույթով՝ ճշգրտելով Կոնվենցիայի II հոդվածի 3-րդ կետում և Մոդելային օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում գործածված «null and void» եզրույթի թարգմանությունը, ինչը կօգնի խուսափել տվյալ հարցում արբիտրաժային դատարանի լիազորությունների, իրավունքների և պարտականությունների տարընթերցումից:

- Անհրաժեշտ է լրացնել Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածները, «գործունակ» բառից հետո ավելացնելով «կամ իրավունակ» բառերը: Մոդելային օրենքը և Կոնվենցիան (հոդվ. V կետ 1, ենթակետ «ա») անգլերեն բնօրինակներում օգտագործում են «was under some incapacity» արտահայտությունը, որը թարգմանաբար նշանակում է «եղել է որոշ չափով անիրավունակ» կամ «իրավունակություն արատ»: Բացի այդ, «գործունակություն» եզրույթը մեր իրավական համակարգում գործածելի է ֆիզիկական անձանց առնչությամբ, մինչդեռ իրավաբանական անձանց դեպքում գործածվում է «իրավունակություն» եզրույթը:

- Առաջարկվում է օրենքով հստակ սահմանել, որ մշտապես գործող արբիտրաժային դատարան – հաստատությունները վեճ չլուծող մարմիններ են, իսկ կոնկրետ վեճերը լուծվում են հատուկ դրանց լուծման համար ստեղծված արբիտրաժային դատարանների (ներկայիս մոտեցմամբ՝ «տրիբունալների») կողմից՝ միանձնյա կամ կոլեգիալ կազմով: Մինչդեռ օրենքը, սահմանելով «արբիտրաժային տրիբունալ» հասկացությունը որպես միանձնյա արբիտր կամ արբիտրների կազմ, շրջանցել է «արբիտրաժային դատարան» հասկացությունը և այն չի սահմանել, ինչն արդարացված համարել չի կարելի:

- Գտնում ենք, որ ՀՀ տարածքում օտարերկրյա արբիտրաժային վճիռի իրավական գործողությունը պետք է սկսվի դրանաչման պահից: Հետևաբար, իրավական որոշակիության սկզբունքի իրացումը այս առումով ենթադրում է իրավական գործողության մեջ գտնվող արբիտրաժային վճիռների առկայություն պարագայում նույն անձանց միջև, միևնույն հիմքով, նույն առարկայի շուրջ քաղաքացիական դատավարության կարգով գործի քննության (վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման) արգելքը: Հետևաբար, ՀՀ ՔԴՕ 91-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 109-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերը օտարերկրյա արբիտրաժային վճիռների պարագայում պետք է կիրառելի լինեն ՀՀ տարածքում դրանց ճանաչված լինելու պարագայում:

- Վիճարկման օբյեկտ պետք է հանդիսանան արբիտրաժային դատարանի բոլոր այն ակտերը, որոնք նյութական իրավունքներ և պարտականություններ են սահմանում արբիտրաժային գործին մասնակցող անձանց համար կամ որևէ ձևով ներգործում, սահմանափակում են վերջիններիս կողմից նյութական իրավունքների իրացման հնարավորությունը: Արբիտրաժային վարույթի մասնակից չհանդիսացող անձինք իրենց սուբյեկտիվ իրավունքները կարող են պաշտպանել դատարանի կողմից կայացված՝ արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար կատարողական թերթ տրամադրելու վերաբերյալ որոշման դեմ վերաքննիչ բողոք բերելու միջոցով:

- Արբիտրաժի նկատմամբ պետական վերահսկողական իրավասություններ իրացնելու արդյունքում իրավասու դատարանն արբիտրաժային վճիռն օժտում է նաև նախադատելիության հատկանիշով: Գտնում ենք, որ օրենսդրության հետագա կատարելագործման նկատառումներից ելնելով, այս խնդիրը պետք է ստանա իր հստակ նորմատիվ կարգավորումը: ՀՀ տարածքում իրականացված արբիտրաժի արդյունքում կայացված արբիտրաժային վճիռն ուժի մեջ մտնելու պահից պետք է օժտվի իրավական ներգործությամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Հովհաննիսյան Հ. «Արբիտրաժային վճիռների ճանաչման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, սեպտեմբեր, ISSN 1829-0744, 9/183, 2014թ., էջեր 82-89,

2. Հովհաննիսյան Հ. «Արբիտրաժային ակտերի վիճարկման վարույթի օբյեկտային նախադրյալները», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, հոկտեմբեր-նոյեմբեր, ISSN 1829-0744, 10-11/184-185, 2014թ., էջեր 56-65,

3. Հովհաննիսյան Հ. «Արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու որոշ հիմքերի կիրառման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», «Արդարադատություն» գիտական հանդես, սեպտեմբեր 3 (30), 2015թ., էջեր 12 – 19,

4. Հովհաննիսյան Հ., «Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը և դրանց դասակարգումը», «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015թ. նյութերի ժողովածու», ԵՊՀ հրատարակություն, Երևան 2016, էջեր 385 – 401:

ОГАНЕСЯН АЙК АРТАШЕСОВИЧ

ПРОБЛЕМЫ ПРОИЗВОДСТВА ПО ДЕЛАМ ОБ ОСПАРИВАНИИ АРБИТРАЖНЫХ РЕШЕНИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Диссертация посвящена всестороннему изучению и анализу актуальных проблем института оспаривания арбитражных решений в Республике Армения (РА).

Актуальность темы обусловлена тем, что данное производство, в целом,

осталось за рамками правового регулирования в гражданском судопроизводстве Армении.

Целью данного исследования является системное изучение и анализ института оспаривания, включая регулирующее законодательство, выявление спорных вопросов связанных с данным институтом и законодательных пробелов, представление предложений по устранению таковых и по реформированию соответствующего законодательства.

Научная новизна исследования заключается в том, что впервые в армянской юриспруденции по возможности комплексно и разностронне исследован и проанализирован институт оспаривания арбитражных решений, в результате которого выявлены и подвергнуты изучению и анализу такие важнейшие вопросы связанные с данным институтом как правовые предпосылки производства по делам об оспаривании арбитражных решений, классификация арбитражных актов, проблемы границ правового действия данных актов, законодательные изъяны в данной сфере. Сформулированы и внесены предложения по усовершенствованию законодательства и судебной практики РА.

На основании анализа институциональных особенностей правовых механизмов разрешения споров возникающих из торгово-экономических отношений, видов арбитражных актов и правовых режимов их оспаривания, автором предлагается дифференцировать правовые режимы признания и выдачи исполнительного листа для принудительного исполнения актов международных публичных и коммерческих арбитражей, включая возращения против признания и исполнения арбитражных актов в рамках производства по делам об оспаривании таковых. В данном случае автором предлагается отдельное праворегулирование, вносящее ясность в состав субъектов компетентных признать арбитражные акты и выдать исполнительный лист, их функции, а также субъективные процессуальные права и обязанности формирующие содержание упомянутых правоотношений.

Подчеркивая важность вопроса полноценного обеспечения процессуальных мер защиты субъективных прав сторон арбитражного разбирательства, автор предлагает зафиксировать четкие правовые механизмы на национальном правовом уровне как в плане требования признания и принудительного исполнения арбитражных решений, так и в плане реализации мер их оспаривания. Таким образом автором выдвигается и обосновывается точка зрения, согласно которой основной процессуальной мерой защиты прав против признания и принудительного исполнения иностранных арбитражных решений в РА должна быть рассмотрена возможность оспаривания правомерности данных арбитражных решений посредством подачи возражений. Автором выдвинуто и обосновано мнение, согласно которому вопросы включенные в

объектный и субъектный круг арбитражных решений принятых на территории РА не подлежат повторному рассмотрению и решению в порядке гражданского процесса, за исключением случая отказа компетентным судом в выдаче исполнительного листа. Более того, в данном случае, для защиты своих субъективных материальных и процессуальных прав, сторона может реализовать возможность оспаривания арбитражного решения вне зависимости от того, обратился ли взыскатель по арбитражному решению в суд с требованием экзекватуры или нет.

Изучив и проанализировав законодательство РА и ряда стран с развитым арбитражным законодательством и практикой, а также научную юридическую литературу, автор приходит к мнению, что лица не ставшие стороной арбитражного разбирательства (чьи права и/или законные интересы затронуты арбитражным решением) могут в данном случае защитить свои субъективные права посредством подачи апелляции против постановления суда о признании и выдачи исполнительного листа.

В результате многостороннего анализа оснований отмены арбитражного решения, автором предложено ограничить дискреционные полномочия суда и определить четкие условия правомерности в части демонстрации судебной дискреции при решении вопроса отмены арбитражного решения в присутствии оснований для отмены такого арбитражного решения.

HAYK ARTASHES HOVHANNISYAN

**PROBLEMS OF CHALLENGING PROCEEDINGS OF ARBITRAL AWARDS
IN THE REPUBLIC OF ARMENIA**

The dissertation is devoted to overall research and analysis of actual problems of the institute of challenging of arbitral awards in Armenia. The relevance of the theme is conditioned to reality that, in general, this type of proceeding remained beyond the scope of legal regulation in the Armenian civil procedure.

The study aims at systemized research and analysis of the institute of challenging, including regulatory legislation, identification of disputable issues regarding the mentioned institute and legislative gaps, submission of proposals on their elimination and on reforming of the relevant legislation.

The scientific novelty of the study is that for the first time in the Armenian jurisprudence the institute of challenging of arbitral awards is researched and analyzed complexly and thoroughly to the extent possible, in a result of which such significantly important issues of this institute as legal presuppositions of challenging proceedings, classification of arbitral acts, problems of legal boundaries of effect of such acts, legislative defects on the given sphere. Proposals on perfection of legislation and judicial practice of Armenia are formulated and submitted.

Based on the analysis of institutional features of legal mechanisms of dispute resolution arising from commercial – economic relations, types of arbitration acts and legal regimes of their challenging, author suggests to differentiate legal regimes of recognition and issuance of writ of execution (exequatur) for compulsory enforcement of international public and commercial arbitration, including objections against recognition and enforcement of arbitral acts in the frame of challenging proceeding of the given acts. In this case, a separate legal regulation is suggested, which brings in clarity in composition of subjects that are competent to recognize and issue writ of execution, their functions, as well as subjective procedural rights and obligations forming the content of the aforementioned legal relations.

Author emphasizes the importance of the question of sterling provision of procedural means of protection of subjective rights of the arbitration parties, thus suggesting fixation of clear legal mechanisms on national juridical level in respect to request on recognition and enforcement of the arbitral awards as well as realization of means of their challenging. Thus, the author proposes and substantiates a point of view, in accordance to which the opportunity to contest lawfulness of such arbitral awards shall be considered as a basic procedural mean of protection of rights versus recognition and enforcement of foreign arbitral awards in the Republic of Armenia. A point of view has been offered and substantiated by the author, in accordance to which, the questions included in object and subject circle of arbitral awards made in

the territory of the Republic of Armenia are not subject to a reconsideration and judgment in terms and in order of civil procedure, except in case of refusal by the competent court in exequatur. Moreover, in this case, for the purposes of protection of its subjective material and procedural rights, the party may realize possibility of contesting the arbitral award regardless the fact of the creditor's (based on arbitral award) application to the court requesting exequatur or not.

While researching and analyzing the legislation of the Republic of Armenia and a number of countries having developed arbitration legislation and practice, as well as juridical scientific literature, the author comes to an opinion that those persons (parties) who did not become a party to an arbitral proceedings (and in a result of arbitral proceedings an arbitral award affects such persons rights and/or lawful interests) may in such case protect their subjective right through submitting an appeal against the decision of the state court on issuance of exequatur.

In a result of multisided analysis of the grounds of setting aside the arbitral award, it has been suggested by the author to limit the discretionary powers of the court and to establish clear cut conditions in terms of demonstration of judicial discretion while deciding on the issue of setting aside of the arbitral award.